ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐԱԶԱՏ ՁԱՅՆԸ

(Ն. Զարյանի ծննդյան 60-ամյակի առիթով)

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Լրացավ սովետահայ գրականության անվանի վարպետներից մեկի՝ Նաիրի Զարյանի ծննդյան վաթսունամյակը։

Որպես գրող, Զարյանը ամբողջովին սովետական կարգերի ծնունդ է. նրա ստեղծագործական կյանքը սերտորեն կապված է հայ ժողովրդի սոցիալիստական վերածննդի հետ և արտացոլում է վերափոխումների այն երկար ու բարդ պրոցեսը, որ ապրել է սովետական երկիրը անցած ժամանակամիջոցում։ Քաղաքացիական կռիվների հերոսապատումը, նոր կյանքի կառուցման առաջին քայլերը, երկրի ինդուստրացումն ու գյուղի կոլեկտիվացումը, սոցիալիստական հասարակարգի ամրապնդումը, Հայրենական Մեծ պատերազմն ու ետպատերազմյան խաղաղ շինարարությունը, կոմունիստական բարոյականության հաստատումն ու մարդկային նոր բնավորության ձևավորման ընթացքը,— ահա այն կարևոր երևույթները, որոնք իսոր ու բազմակողմանի արտացոլում են գտել Զարյանի երկերում։ Հենց դրա շնորհիվ էլ նրա ստեղծագործությունը դարձել է մեր ժամանակի և մեր ժողովրդի հարազատ ձայնը, մեր ապրած փոթորկոտ օրերի ինքնատիպ գեղարվեստական տարեգրությունը։

Մշտապես կապված լինելով արդիականությանը, Զարյանն իր ստեղծագործություններում արտացոլել է նաև հայ ժողովրդի անցած պայքարի ուղին հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Բավական է թեկուզ վերհիշել նրա ստեղծած կերպարների պատկերասրահը, որ աչքի է ընկնում լայն ընդգրկմամբ։ Այդ պատկերասրահում իրենց արժանի տեղն ունեն մեր ժողովրդի դարավոր մշակույթի և ազատագրական պայքարի մի շարք ականավոր դեմքեր՝ սկսած առասպելական Արա Գեղեցիկից մինչև Կոմիտաս, Աբովյանից մինչև Շահումյան։ Նա ջերմ սիրով է կերտել մեր ժամանակի մարդկանց այնպիսի կերպարներ, ինչպիսիք են՝ Հրանուշը, Ալեքսանը, Սաքո Միկինյանը, Կարինեն, Լևոն Լամբարյանը, Վաչե Ոբյանը և շատ ուրիշներ։

Զարյանի՝ իբրև ստեղծագործողի, բնորոշ գծերից մեկն էլ նրա որոնող ու անհանգիստ ոգին է, կյանքն իր բազմազանությամբ պատկերելու, նոր միջոցներ ու եղանակներ գտնելու մշտական ձգտումը։ Այստեղից էլ՝ նրա ձայնածավալի հարստությունը, ժանրային բազմազանությունը. բանաստեղծ, վիպասան, դրամատուրգ, երգիծաբան, հրապարակախոս, հասարակական գործիչ,— այս է Զարյանի դիմանկարը՝ լայն առումով վերցրած։ Ըստ որում, իրեն մատչելի բոլոր ժանրերում էլ նա դրսևորել է իրականության սեփական զգացողություն, ուրույն ճաշակ ու մոտեցում։ Սովետահայ գրողների ընդհանուր խմբերգում Զարյանի ձայնը հնչում է յուրահատուկ շեշտով ու երանգով՝ միշտ հագեցված պայքարող մարտիկի ավյունով։

1

Իր գրական նախափորձերը Ե. Չարյանը սկսել է շատ վաղ հասակից, տակավին որբանոցում, ուր առաջին անգամ ծանոթացել է հայ կլասիկների երկերին, հափշտակվել Տերյանի տխրաթախիծ մեղեդիներով։ Որբանոցային միջավայրի և զրական խաչաձև ազդեցությունների հետևանքով նրա մեջ ծնունդ էին առնում մռայլ խոհեր ու ապրումներ։ Այդ չի ժխտում և ինքը՝ Չարյանը։ «Ինքնակենսագրության» մեջ նա խոստովանում է, որ վաղ շրջանի իր ոտանավորները «լիքն էին ինքնահեգնանքի դառն զգացմունքով... Ամիսներով ու տարիներով կիսաքաղց վիճակում ես կարդում էի Տերյանի տխուր բանաստեղծությունները և, չհասկանալով դրանց իմաստը, լցվում էի բոլորովին յուրահատուկ, իմ վիճակից բխող տրամադրություններով»։

Նման տրամադրության ու հոգեվիճակի արտահայտություններից է «Անձրև» բանաստեղծությունը (1918), որն իր էլեգիական կոլորիտով, լեզվական ինտոնացիայով ուղղակիորեն առնչվում է «Մթնշաղի անուրջների» հետ.

Դիշեր մինչև լույս անձրևը լացեց
Տանիքի վրա տրտում տնակիս,
Ծեծելով դուռս, խուժելով հոգիս՝
Դիշեր մինչև լույս գարունը լացեց[1]...

Վհատություն արտահայտող այս, ինչպես և նույն շրջանում գրած «Գուցե նստած պատշգամբում», «Աշուն» և էլի ուրիշ բանաստեղծություններ դրսևորում են կյանքից դառնացած պատանու հոգեկան անբավականությունը իր շրջապատից։ Ճիշտ է, դրանցով հեղինակը անմիջականորեն չէր արձագանքում հասարակական երևույթներին, բայց դա բնավ չի նշանակում, թե այդ երգերը զուրկ էին հանրային հետաքրքրությունից և կամ թե արդյունք սոսկ դրքային տպավորությունների։ Երգելով իր անձնական վիշտն ու տխրությունը, սկսնակ բանաստեղծը աննկատելիորեն արտահայտում էր չդոհացած սիրո, կարոտի այն խոր զգացմունքները, որ այնքան բնորոշ էին դաշնակցական Հայաստանում տառապող հազարավոր պատանիներին ու աղջիկներին։ Նրանց սրբերգական կացությունն էր վերապրում Չարյանը, որը տակավին չըմբռնած պատմական զարգացման հեռանկարը՝ համակվում էր լացի ու տրտմության տրամադրությամբ։ Այդօրինակ հոգեվիճակում էլ նրան ձգում էր Տերյանը, որի բանաստեղծական խոսքի մեջ էին որոնում շատերը իրենց խոհերի ու ապրումների հարազատ արձագանքը։

Չարյանի ստեղծագործական հետագա ճակատագրի համար կարևոր նշանակություն ունեցավ նրա հանդիպումը այն ժամանակ արդեն ճանաչված բանաստեղծ Ե. Չարենցի հետ։ Վերջինս, ծանոթանալով նրա բանաստեղծությունների առաջին տետրին՝ խորապես զարմանում է, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո այդպիսի անհույս բաներ են գրվում. «Տետրակդ տար պահիր տանդ և նոր բաներ գրիր, հեղափոխությունը երգիր»,—ասել է Չարենցը[2]։

---

[1] Ն. Չարյան, Միհատորյակ, Հայպետհրատ, 1959, էջ 71։ Բոլոր մեջբերումները կատարվում են այս հատորից, ուստի հետագայում կնշվեն միայն համապատասխան էջերը—Գ. Ս.։

[2] „Знамя", 1956, № 2, էջ 168։

Անսալով Մեծ Հոկտեմբերի խանդավառ երգչի խորհրդին՝ Զարյանը շուտով շրջադարձ կատարեց դեպի ռևոլյուցիոն թեմատիկան։ Դրան գլխավորապես նպաստեց Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը, որը հիմնովին փոխեց մեր ժողովրդի կեցությունը և առավել պարզ դարձրեց սոցիալիստական ռևոլյուցիայի ազատարար նշանակությունը քսանամյա պատանու համար։ Ազգային վերածննդի լենինյան արշալույսով ոգեշնչված՝ Զարյանը կարճ ժամանակամիջոցում հաղթահարեց անցյալի մռայլ տպավորություններն ու խորթ ազդեցությունները և լուրջ որոնումներ կատարեց նոր կյանքն ինքնուրույն ձայնով երգելու համար։

Այդ իմաստով ուշագրավ է նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Զրանցքի կապույտ երկրում» խորագրով (1926), որն իր ակնհայտ թերություններով հանդերձ դրականորեն էր ընութագրում հեղինակին։ Այդ դրքույկի բանաստեղծություններն աչքի էին ընկնում նախ և առաջ թեմատիկ թարմությամբ, կյանքում կատարված տեղաշարժերին արձագանքելու բուռն ձգտումով։ Ճիշտ է, իրենց ձևով, պատկերակառուցման եղանակով դրանք գերազանցապես արդյունք էին ժամանակի իշխող կոսմիկական-ռևոլյուցիոն մտածողության և կրում էին վերացականության դրոշմը, բայց և այնպես արտահայտում էին վերափոխվող կյանքի շունչը, նորի կառուցման պաթոսը։ Հիշենք «Զանգու», «Հնձվորը» և ուրիշ բանաստեղծություններ, որոնց մեջ մռայլ անցյալին հակադրելով ներկան՝ հեղինակը գեղարվեստորեն հավաստում էր նորը, սոցիալիստական աշխատանքի ստեղծարար ուժը։ Նա մեկընդմիշտ հրաժեշտ տվեց հին, մեռնող աշխարհին, որի հետամնաց ու դաժան կյանքի խորհրդանիշն է իր ետևում թողած Խառակոնիսը, և երիտասարդական ավյունով ու խանդավառությամբ, ամբողջ սրտով երգեց սովետական իրականությունը, նրա հաղթական երթը։ Դրա լավագույն ապացույցն են դեռևս 1924 թ. գրած հետևյալ տողերը.

Ողջո՛ւյն քեզ, գալիք, երազ իմ պայծառ,
Որ ծաղկում անվերջ, բացվում ես անծայր,
Որպես այդ շառագունելով...
Դու քանի՞ անգամ ճեպագնաց անցար
Իմ սրտի այս տաք թունելով[1]։

Այս և նման բանաստեղծություններում արդեն առկա էին ստեղծագործական այն առողջ տենդենցները, որոնք զարգանալով ու ծավալվելով, հետագայում պետք է դառնային ընդլուծ գծեր հեղինակի անհատականության համար։ Արդիականության զգացողություն, մարտական շունչ, լավատեսություն,— ահա թե ինչով էր հատկանշվում Զարյանի ստեղծագործական նկարագիրը դեռևս իր տաղանդի առաջին ցոլքերում։

Սրա մարտնչող խառնվածքն առավել նկատելի է այդ շրջանում գրած պոեմներում, որոնց մեջ հնի և նորի հակադրության ֆոնի վրա բացահայտված են նորի անհաղթահարելի ուժը, ռևոլյուցիոն հերոսամարտերի և սոցիալիզմի շինարարության պաթոսը, նոր մարդու ծնունդը։ Վերցնենք թեկուզ «Հրանուշ» պոեմը (1925), որ տոգորված է քաղաքացիական կռիվների և դրանց հա-

1 Միհատորյակ, էջ 5։

ջորդած խաղաղ շինարարության հերոսական շնչով։ Ռևոլյուցիոն ընդհատակի բովով անցած Հրանուշը դարձել է նոր կյանքի խանդավառ շինարար։ Նա ապրում է հասարակական լայն կյանքով և կուլտուր-լուսավորական ակտիվ աշխատանք է կատարում գյուղում։ Համարձակ ու Լոանդուն այդ աղջիկն իր անձնական օրինակով ոգեշնչում է մարդկանց հնի դեմ մղված պայքարում։ Նրա կերպարով հեղինակը հավաստում է այն ճշմարտությունը, որ մեր մարդկանց թափած արյունով է սնվել ու աճել նոր կյանքը։

Անցյալի ռևոլյուցիոն հերոսամարտերի և նորի կառուցման միջև եղած սերտ կապը բացահայտելու նպատակով դեռևս քսանական թվականների կեսերից Զարյանն իր ստեղծագործություններում լայն տեղ հատկացրեց պատմա-ռևոլյուցիոն թեմատիկային։ Նա առաջիններից մեկն էր մեզանում, որ փորձեց էպիկական շնչով պատկերել Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարի անմոռաց դրվագները, վեր հանել ռևոլյուցիոն մարտերի հերոսներին։ Այդ թեմայով են գրված «Նոյեմբերյան օրերին», «Տրիբունը», «Տաթևի ժայռից», «Ապստամբություն» պոեմները և մի շարք բանաստեղծություններ, որոնք որքան էլ անկատար լինեին գեղարվեստական տեսակետից, այնուամենայնիվ, ուշագրավ քայլեր էին ռևոլյուցիոն անցյալի պատկերման ուղղությամբ։ Դրանց մեջ հեղինակը կոնկրետ իրադարձությունների ֆոնի վրա ձգտել է վերարտադրել ժողովրդական մասսաների և նրանց ծոցից ելած խիզախ մարտիկների ազատագրական պայքարը դաշնակցական տիրապետության դեմ։ Այդ պայքարի առաջին գծում էին կանգնած կոմունիստները, որոնք իրենց դաղափարների հաղթությունի համար արհամարհում էին մահը։ Այդպիսիք են բանտում գնդակահարության սպասող կարմիր կոմիսարը՝ Ստեփանը, Նորքի ձորում գաղանային խոշտանգումների ենթարկված Ալավերդյանը, Մուսայելյանն ու Ղարիբջանյանը («Դուք կգաք նորից»), Որոտանի անդունդը նետված բոլշևիկները և շատ ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրը, որպես ռևոլյուցիայի հավատարիմ զինվոր, դրսևորում է հոգու արիություն, անձնազոհություն։ Հեղինակը թեև հարկ եղած չափով չի խորացել իր հերոսների անհատական ապրումների մեջ և չի բացահայտել նրանց վարքի ու գործունեության հոգեբանական նախադրյալները, բայց և այնպես կարողացել է վերստեղծել այն լարված իրադրությունը, որ ծնում էր այդպիսի խիզախ մարդիկ։

Ոչ միայն քաղաքացիական կռիվները, այլև դրանց հաջորդած սոցիալիստական շինարարության առաջին քայլերը, նորի ստեղծումն ու հաղթական ընթացքը միշտ էլ ստեղծագործական ոգեշնչման աղբյուր են եղել Զարյանի համար։ Տակավին «Կառուցողներ» պոեմում (1927) նա աշխատել է պատկերել սովետական մարդու ստեղծարար ջանքերը, վերափոխվող կյանքի ու կենցաղի մի շարք բնորոշ գծեր, որոնք մարմնավորված են որմնադիր Սամսոնի և նրա որդի Գարեգինի կերպարներում։ Հետագայում նա հանդես եկավ «Հնոցի մոտ», «Դիրեկտորը» և ուրիշ գործերով, որոնց մեջ թեև նույնպես զգալի չափով առկա է այդ շրջանի մեր պոեզիային հատուկ սխեմատիզմը, բայց և այնպես զգացվում է երկրի ինդուստրացումը, բանվոր դասակարգի հերոսական աշխատանքը պատկերելու ուժեղ ձգտումը։

Իր ստեղծագործական կյանքի հետագա տարիներին Զարյանը մեծ ուշադրություն է դարձրել նաև գյուղի սոցիալիստական վերակառուցմանը։ Այդ թեմայով են գրված «Ծնվում է նոր կյանքը», «Կապը» և ուրիշ երկեր, որոնք

նախապատրաստեցին հեղինակի թռիչքը դեպի այնպիսի մի ռեալիստական ծավալուն կտավ, ինչպիսին է «Ռուշանի քարափը»։

2

Թե՛ նյութի ընդգրկման և թե՛ գեղարվեստական կատարման իմաստով «Ռուշանի քարափը» (1930) նոր էտապ նշանավորեց ոչ միայն Չարյանի, այլև սովետահայ պոեզիայի զարգացման ճանապարհին։ Այդ պոեմը սոցիալիստական ռեալիզմի մեծագույն հաղթանակն էր մեր գրականության մեջ, ուստի և ժամանակին ջերմ ընդունելություն գտավ ընթերցողների կողմից։ «Ռուշանի քարափով» հեղինակը վճռական շրջադարձ կատարեց դեպի ռեալիստական ժողովրդային արվեստը և դասական տրադիցիաների, մասնավորապես Հովհ. Թումանյանի պոեզիայի լավագույն տարրերի յուրացման ճանապարհով նոր աստիճանի բարձրացրեց պոեմի ժանրը սովետահայ գրականության մեջ։

Պոեմի նյութը գյուղի սոցիալիստական վերակառուցման պրոցեսն է, մեր երկրի ու ժողովրդի կյանքի համար շրջադարձային նշանակություն ունեցող այնպիսի խոշոր իրադարձություն, ինչպիսին էր կոլեկտիվացումը։ Գործողությունը կատարվում է Հայաստանի լեռնային գյուղերից մեկում՝ Քարաշամբում, 1929—1930 թվականներին, երբ գյուղացիությունը մասսայաբար ներգրավվում էր կոլտնտեսային շարժման մեջ։ Այդ շարժումը ոգեշնչում են կոմունիստները, որոնք առաջինը մտնելով կոլտնտեսություն՝ իրենց ետևից տարան չքավոր ու միջակ գյուղացիներին։ Բայց նոր կյանքի կառուցմանը կատաղորեն դիմադրում է կուլակությունը, որի ներկայացուցիչները գործի են դնում բոլոր միջոցները՝ պրովոկացիաներից մինչև սպանություններ՝ վիժեցնելու համար կոլտնտեսային շինարարությունը։ Կոլեկտիվացման համար մղված պայքարի ճակատում զոհվում է պոեմի գլխավոր հերոսը՝ Ալեքսանը, որն իր թափած արյունով ոռոգում է նոր կյանքի ծիլերը, ամրապնդում աշխատավորների հավատը կոլտնտեսային կարգի հաղթանակի նկատմամբ։

Սյուժետային այս հիմքի վրա է կառուցված «Ռուշանի քարափը», որն արտացոլում է բեկման մի ամբողջ ժամանակաշրջան՝ իր հակասություններով ու դժվարություններով։ Ղեկավարվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, Չարյանը կարողացել է իրականությունը պատկերել իր ռևոլյուցիոն զարգացման, հնի և նորի միջև ծավալվող բուռն պայքարի մեջ և արվեստի համոզիչ ուժով հավաստել նորի անխուսափելի հաղթանակը։ Նա ցուցադրել է այն խոշընդոտները, որոնց հաղթահարման ճանապարհով պարտիան ապահովեց մանր սեփականատիրական գյուղացիության անցումը սոցիալիզմի ուղին, ռևոլյուցիոն այդ մեծ շրջադարձը պոեմում ներկայացված է կենսական փաստերի խոր ընդհանրացմամբ, տիպական հանգամանքների ու նրանցով պայմանավորված կոնֆլիկտների և բնավորությունների միջոցով։ Ընթերցողը տեսնում է կյանքն իր բազմաբարդ հյուսվածքի մեջ, դասակարգային լարված պայքարի, անհատական ու հասարակական շահերի բախման պրոցեսում, որն առավելագույն հստակությամբ դրսևորում է «կոլխոզային երկունքի եռուզեռը»։

«Ռուշանի քարափի» գլխավոր արժանիքը հենց այն է, որ նրա մեջ բացառիկ համոզչությամբ արտացոլված է այդ երկունքը՝ հին տնտեսաձևի վերացման և նոր, կոլտնտեսային կարգի ստեղծման բարդ ու դժվարին պրոցեսը։ Ոչ բոլորն են գիտակցում այդ նոր կարգի պատմական անհրաժեշտությունը. կան տատանվողներ, իսկ կուլակները համառորեն դիմադրում են։ Դրան զգա-

լապես նպաստում է այն հանգամանքը, որ առանձին աշխատողներ կոլեկտիվացման բարձր տոկոսների ետևից ընկնելով՝ խախտում են կամավորության սկզբունքը և թույլ տալիս «ձախ» խոտորումներ։ Այդ ամենի հետևանքով գյուղում ստեղծվում է կրքերի լարված մթնոլորտ, հակադիր կողմերի միջև ծավալվող պայքարը դառնում է պոեմի սյուժետային զարգացման հիմքը։ Եթե Գարսևանը, Ալեքսանը և գյուղի մյուս առաջավոր մարդիկ իրենց շուրջը համախմբելով աշխատավորներին, հաստատակամորեն առաջ են տանում կոլտնտեսային շարժումը, ապա դասակարգային թշնամին, հանձին Չաթնանց Սանթրոսի, ամեն կերպ փորձում է կասեցնել այդ վերընթաց շարժումը։ Պայքարի ընթացքում ծնվում ու հաղթանակում է նոր կյանքը՝ աստիճանաբար խորտակելով հին, դարերով կաթծրացած սովորույթներն ու նրանց կրողներին։

Պատմա-հասարակական այդ մեծ հեղաշրջման սրությունն ու դարվածությունը Չարյանը արտացոլեց այնպիսի լայնությամբ ու խորությամբ, որպիսին մինչ այդ և հետո ոչ ոք չկատարեց մեր գրականության մեջ։ Նա հանդես եկավ որպես նորարար արվեստագետ, գեղարվեստորեն մարմնավորելով ժողովրդական կյանքի բեկման պրոցեսն իր բազմազան կողմերով։ Գյուղի և գյուղացիության կյանքում տեղի ունեցող խմորումները, սեփականատիրական տարերքի հաղթահարումը, մասսաների սոցիալիստական գիտակցության աճը և նոր կյանքի լուսավոր հեռանկարները պոեմում պատկերված են զարմանալի կենդանությամբ։ Առանձնապես տպավորիչ են մասսայական տեսարանները, որոնցով հեղինակը բացահայտել է գյուղացիության ստեղծարար ուժերի արթնացումն ու ակտիվացումը։ Դրա հետ միաժամանակ Չարյանը ցույց է տվել, թե ինչպես գյուղի սոցիալիստական վերակառուցման պրոցեսում ծնվում է նոր մարդը, մասնատիրական հոգեբանությունը վերափոխվում է կոլեկտիվիստական հոգեբանության։ Բայց այդ անցումը տեղի է ունենում ոչ թե խաղաղ ու հարթ, այլ համառ ու երկարատև պայքարի շնորհիվ։

Այդ կարևորագույն պրոբլեմը ավելի ցայտուն կերպով շոշափված է «Սարո Միկիինյան» պոեմում (1935), որն իր ընդգրկած կյանքով անմիջական շարունակությունը լինելով «Մուշանի քարափի»՝ անտարակույս մի նոր աստիճան է հեղինակի ստեղծագործական առաջընթացի մեջ։ Այստեղ վառ համոզչությամբ պատկերված է հանրային կյանքի պայմաններում սոցիալիստական գիտակցության հաղթանակը։ Կոլտնտեսային իրականությունից առնված կոնկրետ նյութի հիման վրա Չարյանը բացահայտում է հնի համեմատությամբ նոր հասարակարգի գերազանցությունը և այդ կերպ ձգտում հաստատել սովետական անհատականության լավագույն գծերն ու հատկությունները։ Սարո Միկիինյանի կերպարում խտացված է կոլտնտեսային կարգի հաստատման հետևանքով գյուղում առաջացած այն նորը, որի էությունը հասարակական-հանրային շահերի խոր գիտակցումն է։ Կոլտնտեսականների գիտակցության մեջ կատարվող բուռն պայքարն ընդդեմ եսասիրական մասնավոր շահերի՝ հանուն հասարակական բարձր ձգտումների,— ահա այն գլխավոր կոնֆլիկտը, որ ընկած է այդ պոեմի հիմքում և կազմում է ծավալվող գործողությունների հանգույցը։ Այդ գիտակետից էլ բանաստեղծը հմտորեն մեկնաբանում է իր գլխավոր հերոսի հոգևոր նկարագիրը, նրա գաղափարական աճը։ Նա ցույց է տալիս, թե ինչպես նախկին սեփականատեր գյուղացին հետզհետե դառնում է սոցիալիստական հասարակարգի ակտիվ ու գիտակից անդամ։ Սարոյի ան-

հատականությունը տիպականացված է դեպքերին ու գործողություններին համընթաց, շրջապատող կյանքի հարածուփ ոլորտի մեջ։

Հետագա տարիներին ևս Զարյանը չհեռացավ կոլտնտեսային գյուղի թեմատիկայից։ Մի կողմ թողած «Հացավան» վեպը, որի առաջին մասը լույս տեսավ 1937 թ., այստեղ չենք կարող չանդրադառնալ «Կարինե» պոեմին (1941), ուր նույնպես հեղինակին զբաղեցնողը նոր մարդու, տվյալ դեպքում՝ հասարակ գեղջկուհու հոգևոր աճման պրոբլեմն է։ Իր պոեմի համար իբրև բնարան ընտրելով Թումանյանի նշանավոր խոսքերը՝ «Վաղ ժամանակ մի հայ շենում մի հարկեվոր հարս է լինում», Զարյանը «անիծած հարսին» հակադրում է նոր կյանքի առաջամարտիկ դարձած իր հերոսուհուն։ Սարկական կապանքներից ազատագրված հայ գեղջկուհին դուրս է եկել հասարակական գործունեության լայն ասպարեզ, վերափոխվել ու դարձել նոր մարդ, «իր ուժին գիտակ և ինքնավայել» քաղաքացի։ Այդպիսին է ահա Հեթմանց Կարինեն, որ հմտորեն գլխավորում է Ուռուձոր գյուղի կոլտնտեսությունը և միաժամանակ ոգեշնչում իր ամուսնուն՝ Վահանին, ստանձնելու նորակազմ սովխոզի ղեկավարությունը։ Երիտասարդ, գեղեցիկ ու համարձակ այդ կինը քայլում է նոր կյանք կառուցողների առաջին շարքերում և խանդավառում աշխատավորներին։ Նրա կերպարի մեջ հեղինակը մարմնավորել է խավարից դեպի կյանք ելած սովետական հայ կնոջ լավագույն գծերը։

Ինչպես այս, այնպես էլ նախորդ պոեմներում Զարյանը քննադատորեն օգտագործել է հայ դասական պոեզիայի, մասնավորապես Հովհ. Թումանյանի ժողովրդաշունչ արվեստի լավագույն տրադիցիաները։ Դրանց ստեղծագործական յուրացման ճանապարհով նա հասավ գեղարվեստական պատկերի կոնկրետության, ոճի պարզության ու ժողովրդայնության։ Թումանյանական տրադիցիան նրա մոտ, սակայն, արտահայտվել է ոչ միայն լեզվա-ոճական արվեստի, առանձին արտահայտությունների ու համեմատությունների միջոցով, այլև կերպարների գեղարվեստական բնութագրմամբ ու տիպականացմամբ, դարաշրջանի կյանքի լայն ընդգրկմամբ։ Թերևս ամենից առաջ այստեղ պետք է որոնել Թումանյանի ազդեցությունը Զարյանի վրա, որը սովորելով իր մեծ ուսուցչից՝ կարողացավ հասնել իսկական նորարարության։

3

Նոր մարդու կերպարի ստեղծումը առաջնահերթ խնդիր էր Զարյանի համար ո՛չ միայն էպիկայում, այլև՝ քնարերգության մեջ։ Նա խորապես գիտակցում էր այդ պահանջի անհրաժեշտությունը և մանավանդ նրա իրականացման դժվարությունը, ուստի և իր երկերում հաճախ էր անդրադառնում կյանքի ու դրականության փոխհարաբերության հարցին։

Հատկանշական է, որ դեռևս 30-ական թվականների կեսերին բանաստեղծը որոշակիորեն հակադրվեց «մաքուր արվեստի» մունետիկներին, որոնք սիրում էին ներանձնանալ, ճախրել իրենց «ես»-ի անապատում և կամ դեգերել անցյալի մութ բավիղներում։ Իսկական արվեստի ուժը նա տեսնում էր ժողովրդի կյանքի ու պայքարի հետ ունեցած սերտ կապի մեջ, իրականության զարգացման բարդ պրոցեսներն ըմբռնելու և դրանք ճիշտ վերարտադրելու մեջ։ Նրա համոզմամբ, որքան խորն է այդ կապը, այնքան ավելի մեծ է ու նշանակալից տվյալ երկի գաղափարական-գեղարվեստական ներգործությունը։

Մեր ժամանակի արվեստի և արվեստագետի, հերոսի և հերոսականի, գրական տրադիցիաների և նորարարության մասին Չարյանի հայացքները ցայտուն կերպով արտահայտվել են «Ֆիրդուսի», «Քայլի՛ր իմ երգ», «Երազ», «Երգի երազ» և մի շարք այլ բանաստեղծություններում, որոնք ունեն ծրագրային բնույթ։ Դրանց մեջ հեղինակը հանդես է գալիս որպես սոցիալիստական ռեալիզմի կրքոտ պաշտպան, առաջավոր տրադիցիաների ժառանգորդ և ստեղծագործական նորարարության խանդավառ մարտիկ։ Նա պարզ գիտակցում է, որ փոխվել են ժամանակն ու մարդիկ, «այլ են հիմա հերոսության ձևն ու իմաստը խորախոր», բոլորովին ուրիշ՝ նոր կյանք կառուցողի էսթետիկական պահանջները։ Մեր օրերի հերոսը պահանջում է գեղարվեստական նոր խոսք, այնպիսի երգ, որ «սրտի պես տրոփե», «ծիածանի պես հուրհուրա», լինի «աղբյուրի պես պարզ ու զուլալ» և «պայթի որպես նոնակ, ցրի բերդերը թշնամու»,

Ե՛րգ, որ լինի կյանքի համար
Ե՛վ հայելի, և՛ զարդ, և՛ զենք...[1]

Բանաստեղծը գտնում է, որ մեր ժամանակի հերոսին վայել այդպիսի երգ ստեղծելու, նրա կյանքի «բարդ էպոպեն» կերտելու համար չի կարելի սահմանափակվել անցյալի գեղարվեստական ձևերի մեխանիկական օգտագործմամբ։ Դա կնշանակեր ընթանալ էպիգոնության ուղիով, որ կարող է տանել «լոկ դեպի մահ ու մոռացում»։ Հարկավոր է խիզախել, որոնել ու գտնել այնպիսի նոր ձևեր, թարմ պատկերներ, որոնք ընդունակ են առավելագույն ուժով արտահայտելու «ոգին ու հույզը» մեր դարի։ Իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, երբ գրողը համաքայլ ընթանա իր ժամանակի հետ, կապված լինի «առօրյային մեր բոցավառ», «կարդա և՛ կյանք, և՛ գիրք», հարստանա անցյալի փորձով և խանդավառվի մեր մարդկանց գործերով ու մտքերով։ Այլ կերպ ասած՝ դասական տրադիցիաների ու նորարարության կենդանի միասնություն,— ահա ստեղծագործական այն ճիշտ սկզբունքը, որ պաշտպաներ ու կիրառել է Չարյանը՝ հետևելով Չարենցի օրինակին։ Նա ևս գտնում է, որ իրականության խոր ճանաչողությունը և արդիական զգացողությունը պետք է դառնան մեր ժամանակի արվեստի զարգացման առաջմղիչ ուժը։ Եվ ինչպես մեր օրերի հերոսները «վարում են կյանքի կորդերը և նոր ուղի» հարթում, այնպես էլ նրանց արվեստագետը պետք է տքնությամբ բացի իր երգերի հունը, համարձակորեն ընթանա ստեղծագործական խիզախումների դժվարին ճանապարհով։

Հենց այդպիսի արվեստագետ է ինքը՝ Չարյանը, որը միշտ որոնել է նորը, էականն ու զարգացողը կյանքում և գրականության մեջ։ Այդ որոնումների ընթացքում, ճիշտ է, նա երբեմն ստյթաքել է, բայց երբեք չի խուսափել դժվարություններից և համառ ու տքնաջան աշխատանքով շարունակել է իր ուղին դեպի բարձունքներ։ Սովորելով անցյալի վարպետներից՝ նա տվել է այնպիսի գործեր, որոնք միշտ հնչել են ինքնուրույն շեշտով, մեր մեծ առօրյայի հարազատ ձայնով։

Այդ վերաբերում է նաև նրա լիրիկային, որը նոր և ավելի բարձր աստիճանի հասավ նախապատերազմյան տարիներին։ Այն աչքի է ընկնում գաղա-

[1] Միհաթորյակ, էջ 212։

փարական նպատակասլացությամբ, գեղարվեստական ձևերի բազմազանությամբ։ Երգ, ներբող, սոնետ, տրիոլետ, քառյակ, գազել, չափածո նամակ, էպիգրամ,— բանաստեղծական այս և այլ ձևեր հմտորեն օգտագործել է նա՝ տալով իր ժամանակի ու ժամանակակիցների հույզերն ու մտորումները։ Զարյանի լիրիկական հերոսը նոր, սովետական մարդն է, որն իր զգացումներով ու իտհերով միահյուսված է ժողովրդին և ապրում է նրա կենսական շահերով։ Նա իրեն զգում է կյանքի տերը, նրա շինարարը և իր անձնվեր աշխատանքով է՛լ ավելի գեղեցկացնում այն։

Ահա այդպիսի առույգ, իր ուժերին վստահ և «պայծառ երազանքներով թևավորված մարդու» հոգու կենսագրությունն է պատկերել Զարյանը իր բանաստեղծություններում, որոնց առաջատար ոգին մարտնչող հումանիզմն է։ Ինչի մասին էլ գրել է նա՝ սիրո թե ատելության, վշտի թե ուրախության, անցյալի թե ներկայի,— բոլոր դեպքերում էլ բանաստեղծի ելակետը նոր կյանք կերտող մարդն է։ Բնորոշ է, որ նույնիսկ անցյալին նվիրված իր ստեղծագործություններից մեկում («Երկու հանճարեղ գլուխ») Զարյանը տալիս է կատարյալ մարդու իր երազը, այնպիսի մարդու, որ լիներ ազնիվ, հպարտ,

Անցներ առանց վախի, ճակատը պարզ,
Զրզգար հոգում ստորության արատ...[1]

Հենց այդպիսին է Զարյանի երգած մարդը, որի մեջ մշտաբորբոք են կյանքի սերը, գեղեցկի զգացումը, ինքնակատարելագործման ձգտումը. նա ակտիվորեն մասնակցում է նոր աշխարհի կառուցմանը և իր բազկով ու հանճարով արագացնում մարդկության երթը դեպի կոմունիզմ։

Այդ աշխարհաերթ շարժման մեջ իր արժանի տեղն ունի նաև հայ ժողովուրդը, որի սոցիալիստական վերածնության բերկրանքն է արտահայտել Զարյանը իր մի շարք բանաստեղծություններում։ Հիշենք այնպիսի գործեր, ինչպիսիք են «Երիտասարդ իմ մայր», «Երևան», «Սևան» և, մանավանդ, «Վերածնունդ» հայրենաշունչ բանաստեղծությունները, որոնց մեջ վարպետ շնչով արտացոլված են հայրենի երկրի ու ժողովրդի կյանքում կատարված մեծ վերափոխությունները, բացահայտված,

Թե ինչ լույս է ծագել, ինչ կյանք է եռում
Հայոց լեռներում, հայոց լեռներում...[2]

Բանաստեղծը խանդավառված է այն գիտակցությամբ, որ մեծ Լենինի ստեղծած ու կոփած Կոմունիստական պարտիայի իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ երբեմնի աղքատ ու հետամնաց Հայաստանը դարձել է ծաղկուն սովետական ռեսպուբլիկա։ Նրա աշխատասեր ժողովուրդը, աղատագրվելով սոցիալական ու ազգային ճնշումներից, բուժել է իր դարավոր վերքերը և առաջ է շարժվում հսկայի քայլերով։ Նա այլևս նախկին փոքր ու ծեծված ժողովուրդը չէ, որ հաճախ տնքում էր «հզոր հարևանի ձեռքից», այլ ռևոլյուցիոն մարտերի ու խաղաղ շինարարության փորձով իմաստացած սոցիալիստական ազգ, միասնական ընտանիքի հավասարազոր անդամ։

---

1 Միհատորյակ, էջ 210։
2 Նույն տեղում, էջ 425։

Այդ ամենը բաղմակողմանի արձագանք են գտել Չարյանի պոեզիայում, ուր չխամրող գույներով պատկերված է հին և հավերժ երիտասարդ մեր ժողովրդի հերոսական կերպարը։ Ըստ որում, այդ կերպարը գծելիս բանաստեղծը հաճախ է դիմում իր կենսա-պատմական տվյալներին, որովհետև ընդհանուր և նման շատ բան կա ժողովրդի և նրա երգիչ որդու ճակատագրերի միջև։ Ժողովրդի և նրա բանաստեղծի միջև ստեղծված անխզելի կապի, նրանց օրգանական միասնության խոր զգացողությամբ են տոգորված «Հպարտություն», «Հորդոր» և ուրիշ երկեր, որոնց մեջ հառնում է մեր դարաշրջանի առաջավոր արվեստագետի կերպարը։ Նա դիտակցում է իր տեղն ու դերը հասարակական կյանքում, հավատարմորեն ծառայում է ժողովրդին և վայելում հարազատ պարտիայի վստահությունը։

Ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար, սակայն, անհրաժեշտ է նկատել, որ այդ և հետագա տարիներին Չարյանի պոեզիային խիստ հարվածեց անհատի պաշտամունքի ազդեցությունը։ Վերջինս արտահայտվեց ոչ միայն նրանով, որ մեր բանաստեղծը միակողմանիորեն տարվեց ներբողագրությամբ, այլև առատ տուրք տվեց պարտադային տրամադրություններին ու նրանցով պայմանավորված վերամբարձ հռետորականությանը։ Մի կողմ թողած առանձին գործեր, այստեղ չենք կարող չհիշել «Դյուցազնագիրք» պոեմը, որն իր կառուցվածքով, դեպքերի ու գլխավոր դեմքի ցուցադրական նկարագրությամբ, ճչան էպիտետների ու փոխարերությունների սիստեմով՝ լուրջ նահանջ էր ռեալիստական արվեստից։

Չնայած այդ ակամա տուրքին, Չարյանի ստեղծագործական զարգացման հիմնական ուղղությունը միշտ եղել է առողջ ու բեղմնավոր։ Նա ընթացել է սոցիալիստական ռեալիզմի հունով և վառ կերպով արտահայտել մեր ժամանակի շունչը, «իմաստությունն ու գոտեմարտը իր դարի»։

Այդպիսի մի աշխարհացունց գոտեմարտ էր սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմը, որին ակտիվորեն մասնակցեց Չարյանը թե՛ իբրև քաղաքացի և թե՛ իբրև գրող։

4

Պատերազմի տարիներին նոր ուժով հնչեց անձնվեր քաղաքացու և քաղաքացիական պոեզիայի մարտիկ-տրիբունի ձայնը։ Նրա գեղարվեստական խոսքը պայթեց որպես արկի շառաչ, դարձավ խոցող սվին՝ արյունարբու ոսոխի համար և ոգեշնչող կոչ՝ հայրենապաշտպան ժողովրդի սրտում։ Բանաստեղծի հայրենասիրական երգը ուղեկցեց մեր մարդկանց թիկունքում և ռազմաճակատում։ Կարելի է ասել, որ հայ գրողներից և ոչ մեկը այնքան խոր և բաղմակողմանիորեն չարտացոլեց մեր Հայրենիքի ապրած այդ մեծ փորձությունը, որքան Չարյանը։ Նա գրեց ամենատարբեր ժանրերի գործեր, որոնց առանցքն ու միջուկը դարձան սովետական հայրենասիրությունը, ժողովուրդների լենինյան բարեկամությունը, հումանիզմն ու լավատեսությունը։ Այդ տարիներին լույս տեսան նրա բանաստեղծությունների ու պոեմների մի շարք ժողովածուներ՝ «Մարտակոչ» (1941), «Վրեժ» (1942), «Շիկացած հոգով», «Լսե՛ք դարեր», «Ձայն հայրենական» (1943) և այլն, որոնց վերնագրերն իսկ դրսևորում են հեղինակի ապրումների ու խոհերի ընթացքը, նրա անխզելի կապը մարտնչող ժողովրդի հետ։

Չարյանը չափազանց խոր զգաց Հայրենիքին սպառնացող վտանգը, որը բնականաբար նրա մեջ է՛լ ավելի բորբոքեց հայրենասիրության սրբազան հուրը։ Պատահական չէ, որ պատերազմի հենց առաջին օրը (1941 թ. հունիսի 22-ին) նրա սրտից թռավ այսպիսի խոսք.

Դու քաղցր ես, հո՛ղ իմ հայրենի,
Չկա քեզնից անուշ անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին,
Երբ սպառնում է թշնամին,
Դու ավելի ես բաղցրանում...[1]

Հայրենաշունչ այս տողերով է բանաստեղծը սկսել Հայրենական պատերազմի գեղարվեստական տարեգրությունը, որի վերջին էջը կազմում է «1945 թ. մայիսի 9-ը» վերնագրով հաղթանակի երգը։ Քառամյա ժամանակաշրջան ընդգրկող այդ տարեգրությունը կարդալիս դժվար չէ տեսնել ծանր տառապանքներով ու հերոսական սխրանքներով լի այն ուղին, որով անցել է մեր ժողովուրդը և համաշխարհային պատմական հաղթանակ նվաճել ֆաշիզմի դեմ։ Ընթերցողը տեսնում է ռազմաշունչ օրերի լարված իրադրությունը, զգում սովետական մարդկանց սերն ու նվիրվածությունը Հայրենիքին և ատելությունը դեպի թշնամին, լսում ժողովրդական ցասման որոտը և հիտլերյան հորդաների վրա գրոհող մեր բազմազգ զորագնդերի հաղթական ոտնաձայնը։

Դեռ պատերազմի առաջին ամիսներին, երբ մեզ համար ստեղծվել էր ծանր դրություն, Չարյանը արտահայտեց մեր ժողովրդի անխախտ համոզմունքը, որ «Հիտլերի գոռող երկաթե հորդան պիտի ջախջախվի»։ Այդ վառ հավատով էին ներթափանցված «Մարտակոչ», «Նա պիտի կախվի», «Գերմանիա» և մի շարք ուրիշ երկեր, որոնցով նա գաղափարապես զինեց ընթերցողին, նրա մեջ բորբոքելով անսահման ատելություն դեպի թշնամին։ Ցասկոտ տողերով մերկացնելով ֆաշիստական գազանի բարբարոսությունները՝ բանաստեղծը կոչ էր անում սովետական մարդկանց «ջարդել արնոտ մոութը Հիտլերի», պաշտպանել սոցիալիստական հայրենիքը, որի նման սիրված մի այլ երկիր չկա արևի տակ։ Սիրված է նա, որովհետև աճել ու հղորացել է մեր արդար քրտինքով, սովետական մարդկանց պայքարով ու արյունով.

Արյամբ ենք ոռոգել ամեն մի ծառ,
Ամեն ծաղիկ ցոլել մեր քրտինքով։
Մենք մեր մեջքով կրել ենք վեմ ու կիր,
Ժայռ ենք խժռել, ծամել ենք թեժ երկաթ...
Արևի տակ չկա մի այլ երկիր,
Սիրված այսքան խորունկ ու խանդակաթ[2]։

Սովետական հայրենասիրության այդ նոր որակը ավելի պարզ, ժողովրդական ընկալմամբ դրսևորված է արզաքանդցի պառավ նանի խոսքերում («Արզաքանդի խնձորները»)։ Տարեց կոլտնտեսուհու նորատունկ այգին այս-

1 Միհատորյակ, էջ 115։
2 Նույն տեղում, էջ 116։

ոանորեն ներկայացնում է մեր ազատ ու խաղաղասեր երկիրը, որի բազմազգ զավակները կապված են սիրով ու եղբայրությամբ։ Այդ եղբայրությունը, որ է՛լ ավելի կոփվեց թշնամու դեմ մղված հերոսամարտերում, Զարյանի գրչի տակ ստացել է գեղարվեստական վառ պատկերում։ Նա ցույց է տվել, թե ինչպես սոցիալիստական ազգերն ուս-ուսի տված, իրենց ավագ եղբոր՝ ռուս մեծ ժողովրդի դիմավորությամբ անխորտակ պատնեշ ստեղծեցին հիտլերյան պղտոր հեղեղի դեմ և ետ շպրտեցին նրա հորձանքը։ Այդ գաղափարն է մարմնավորված «Մենք չե՛նք տա Մոսկվան», «Քեզ հետ ենք, Մոսկվա» և ուրիշ գործերում, որոնք տոգորված են միասնական ընտանիքի խոր ղղացումով։

Ազգային հպարտությամբ են շնչում Զարյանի այն երկերը, որոնց մեջ պատկերված է հայ ժողովրդի մարտական մասնակցությունը Հայրենական պատերազմին։ Ոգեշնչված իր արյունակից եղբայրների սխրանքներով՝ նա դիմում է նրանց ծնող ժողովրդին հետևյալ խոսքերով.

Եվ դու չես անմասն այս գոտեմարտում աշխարհասասան,
Կարմիր Բանակի առյուծների մեջ, վագրերի շարքում
Կռվում են նաև զավակները քաջ քո ոեգ Սասնա տան
Եվ Դավթի թափով ոսոխին զարկում[1]։

Հանձինս ռազմաճակատում մարտնչող հայ մարտիկների ու հրամանատարների Զարյանը տեսնում է մեր ամբողջ ժողովրդին, որ «կանգնած ոճրի պղտոր հեղեղի դեմ», կրծքով պաշտպանում է իր հարազատ հայրենիքը և դրանով իսկ նրա դանձերն անգին, «մեր մայր լեզուն, արվեստը մեր վսեմ»։ Այդ դիտակցությամբ են գրված «Ուղերձ իմ ժողովրդին», «Միհրդատի դամբարանը» և ուրիշ գործեր, որոնց մեջ տրոփում է հայրենասեր բանաստեղծի սիրտը։

Պատերազմի տարիներին Զարյանի պոեզիան աճում և զարգանում էր ռազմական գործողությունների ընթացքին համապատասխան։ Եթե սկզբում նրա մոտ գերիշխող գգաստացնող ու մոբիլիզացնող խոսքն էր, որով մարտի էլ կոչում ժողովրդին, բորբոքում նրա մեջ դասման ու ատելության կրակը, ապա որոշ ժամանակ անց նկատվեց հակում խորանալու մեր մարդկանց ներքնաշխարհի մեջ, վերարտադրելու հայտնի և անանուն ռազմիկների կոնկրետ սխրագործությունները («Կապիտան Գաստելլո», «Պարծանք», «Նրա վերջին խոսքը» և այլն)։ Դրան զուգընթաց նա ստեղծեց ռազմաճակատային լիրիկայի փայլուն նմուշներ («Այց ռազմաճակատին», «Բլինդաժում»), որոնք դրսևորում են կռվող մարտիկի հոգեբանությունը, նրա կարոտն ու սերը։

Զարյանը, սակայն, չմնաց իրականության քնարական վերապրումների սահմաններում, առանձին դեպքի ու դեմքի պատկերման աստիճանի վրա։ Բրաղարձությունների հետագա ծավալման հետ միասին նրա մոտ առաջացավ կյանքը ավելի լայն մասշտաբներով ընդգրկելու, գեղարվեստական խոր ընդհանրացումներ կատարելու պահանջ։ Շուտով նա հանդես եկավ «Անմահության պարը» (1942), «Զայն հայրենական» (1943) պոեմներով, որոնք միանգամայն տարբեր են իրենց թեմատիկայով ու գեղարվեստական մարմնավորման ձևերով։ Եթե առաջինում հեղինակը պատկերում է Լենինգրադի սրբազան սահմանները պաշտպանող Որյան Վաշեի սխրագործությունը, ապա երկրորդը՝

[1] Միհատորյակ, էջ 142։

վիրտ-էպիկական ընդարձակ մենախոսություն է հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա ազգային վերածննդի և Հայրենական պատերազմին ունեցած մարտական մասնակցության մասին։ Դա գեղարվեստական ինքնատիպ հղացում է, ուր զաղափարական ճիշտ դիրքերից բացահայտված է մեր պատմության հերոսական ոգին և ընդգծված նրա ուղղակի կապը արդիականության հետ։ Անցյալի ու ներկայի կենդանի զգացողությունը հնարավորություն է տվել հեղինակին բանաստեղծորեն կոնկրետացնելու մեր ժողովրդի կերպարը, ցույց տալու նրա ստեղծագործ հանճարն ու հայրենի երկիրը պաշտպանելու վճռականությունը։

Պատերազմը է՛լ ավելի ակտիվացրեց Չարյանի ներգործուն խառնվածքը. նրա մեջ բացահայտեց ստեղծագործական նոր հատկություններ. նա գրեց ոչ միայն հայրենասիրական բանաստեղծություններ, պոեմներ, ակնարկներ ու հոդվածներ, այլև դիմեց այնպիսի մի բարդ ժանրի, որպիսին է թատերգությունը։ Այդ ուղղությամբ նրա առաջին քայլը եղավ «Վրեժ» դրամատիկ պոեմը, որին հաջորդեցին «Ամենագաղան» ծաղրական հեքիաթը և «Այրող դիմակ» դրաման։ Կառուցվածքի ու կերպարման իմաստով որքան էլ թերություններ ունենան դրանք, այնուամենայնիվ, ժամանակին կարևոր դեր խաղացին մեր թատրոնի կյանքում։

Դրամատուրգիայի բնագավառում, սակայն, Չարյանի մեծագույն սխրագործությունը եղավ «Արա Գեղեցիկ» դիցա-պատմական ողբերգությունը (1944), որն իր վարակիչ հայրենասիրությամբ, առողջ կենսափիլիսոփայությամբ արձագանքում էր ժողովրդի սրտի ու մտքի պահանջներին։ Բանաստեղծը իր խորաթափանց մտքի ու բարձրաթռիչ երևակայության շնորհիվ կարողացավ սուզվել դարերի խորքը, պատմության ընդերքից դուրս քաշել ժողովրդական իմաստուն առասպելը և նրա գեղարվեստական մշակմամբ հրաշակերտել այնպիսի մի երկ, որը դարձավ Հայրենի գրականության անմոռ հուշարձաններից մեկը։ Թեև թույլ է բացահայտված սոցիալական տարբեր շերտերի հակամարտությունը և որոշ տուրք է տրված անցյալի իդեալականացմանը, այդուհանդերձ մարդկային ազնիվ կրքերի, սիրո և ատելության, ընտանեկան պատվի ու հավատարմության, ազատասիրության ու հայրենասիրության մի հուզիչ հերոսամատյան է սա, ուր հայոց լեզուն հնչում է դասական ճոխությամբ։

Ստեղծագործորեն աճեց ու առնականացավ Չարյանը պատերազմի տարիներին։ Բազմի շեփոր առած, նա հայրենասեր զինվորի նման քայլեց մարտադաշտերով և իր երգերով նպաստեց այն մեծ հաղթանակին, որի բերկրանքն է արտահայտված հետևյալ տողերում.

Եվ դու, հաղթանակի Մայիս, եկար,
Ընկած հերոսների արյան ցոլքով,
Վերադարձողների հույսով պսպծան,
Մեր տքնությամբ, կռվով և այս երգով
Եկար...[1]

Եվ սա պատմական մեծ հաղթանակի ու հաղթանակած ժողովրդի հավատարիմ երդչի անուրանալի վաստակի ճշմարիտ գնահատականն է։

[1] Միհատորյակ, էջ 180։

5

Ստեղծագործական նոր հաջողությունների հասավ Չարյանը հետպատերազմյան տարիներին, երբ մեր ամբողջ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ խաղաղ ստեղծարար աշխատանքի։

Ինչպես միշտ, այս տարիներին ևս Չարյանը համաքայլ ընթացավ արդիականության հետ և արձագանքեց մեր երկրի ու ժողովրդի առջև ծառացած նոր խնդիրներին։ Ավելի անմիջական դարձավ դրողի և կյանքի կապը, որի շնորհիվ նրա ստեղծագործություններում առավել խորացան ու զարգացան սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները։ Նա ձգտեց գեղարվեստականորեն իմաստավորել ու ընդհանրացնել այն վիթխարի փորձը, որ ձեռք է բերել մեր ժողովուրդը նոր հասարակարգի կառուցման համար մղված պայքարում և միաժամանակ ցուցադրել նրա այսօրն ու վաղը։ Դեպի կոմունիզմ տանող այդ վերընթաց շարժման բովանդակությունը, մեր մարդկանց բնավորությունն ու հոգեբանությունը լայնորեն բացահայտելու նպատակով Չարյանը նորից դիմեց ծավալուն կտավների՝ վեպ, պոեմ, թատերգություն և այլն։

Բնավ պատահական չէ, որ պատերազմից հետո Չարյանը ամբողջականացրեց ու ավարտեց «Հացավան» վեպը (1947), որը նշանակալից նվաճում է սովետահայ արձակի համար։ Իսկ նրա մեջ նկարագրած կյանքը վերաբերում է երեսնական թվականներին, բայց այնտեղ առաջ քաշված շատ հարցեր (դրական կերպարի, կոմունիստական բարոյականության, անցյալի մնացուկների դեմ տարվող պայքարի և այլն) արձագանքում են արդիականությանը։ Չարյանը կարողացել է մեծ հաջողությամբ ցուցադրել, թե ինչպես կոլտնտեսային կարգի տնտեսական ու քաղաքական ամրապնդման պրոցեսում փշրվում են հետամնաց սովորույթի ավերիչ կաշկանդումները, մասսաները վերադաստիարակվում են կոմունիստական գաղափարայնության ոգով և դառնում նոր կյանքի գիտակից շինարարներ։ Այդպիսի առաջավոր մարդիկ են Լևոն Համբարյանը, Վասակ Զորանյանը, Լիպարիտ Լևոնյանը, Հասմիկ Զուրարյանը և շատ ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անհատական խառնվածքն ու բնավորությունը։ Նրանց բոլորին, սակայն, միավորում են գյուղի սոցիալիստական վերափոխման աշխատանքը, պայծառ ապագայի երազանքը, որ քայլ առ քայլ մարմնավորվում է կյանքում։ Հենց դրա մեջ է վեպի ոչ միայն պատմա-ճանաչողական նշանակությունը, այլև մնայուն դաստիարակչական ուժը, ջերմ ու վարակիչ շունչը, որոնցով նա տիրական ազդեցություն է գործում ընթերցող լայն մասսաների վրա։

«Հացավանից» ավելի քան մեկ տասնամյակ հետո Չարյանը հրապարակ հանեց իր երկրորդ վեպը՝ «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» (1958), որն ուշագրավ է իր պրոբլեմայնությամբ ու դրելակերպով։ Հեղինակը այստեղ վերարտադրում է հայ ժողովրդի կյանքը դաշնակների անփառունակ տիրապետության շրջանում, երբ ջարդերից փրկված հայ պատանիները, ճաշակելով որբության դառնությունը, հասունացող դեպքերի ազդեցությամբ հետզհետե հիասթափվում են տիրող կարգերից։ Իր պատանի հերոսների և նրանց շրջապատող կյանքի ռեալիստական նկարագրությամբ հեղինակը բացահայտել է աշխատավորության ծանր կացությունը և սուր ծաղրով մերկացրել դաշնակցական բռնապետությունը։

Չարյանի ստեղծագործական խառնվածքին հատուկ երգիծական ջիղը ավելի ցայտուն կերպով երևան է եկել նրա թատերգություններում, որոնցից առանձնապես լայն մասսայականություն են նվաճել «Աղրյուրի մոտը» և «Փորձաղաշտը»։ Դրանցով հեղինակը վերակենդանացրեց կատակերգական ժանրի լավագույն տրադիցիաները սովետահայ դրամատուրգիայում և ասաց նոր խոսք, որին հետևեցին ուրիշները։ Կոմունիստ սրվեստագետի կրքոտությամբ նա համարձակորեն մերկացրեց մեր կյանքում տեղ գտած արատներն ու բացասական երևույթները՝ քաղքենիությունը, շահամոլությունը, թծանքը, բյուրոկրատիզմը և այն ամենը, ինչ արգելակում է մեր ժողովրդի առաջընթացին։ Նա հրապարակ հանեց մակարույծ տարրերին, կեղծ ու խարդախ մարդկանց, որոնք խախտում են սովետական բարոյականության նորմաները։ Այդպիսի մարդկանց տիպական ընդհանրացում է Բալաբեկը, որ վաղուց դարձել է հասարակ անուն։

Ծաղրի հզոր զենքով քննադատելով ու մերկացնելով մարդկանց գիտակցության մեջ ու կենցաղում եղած «կապիտալիզմի մնացուկները՝ Չարյանը դրանով իսկ օգնում է նորի, առաջավորի աճմանն ու հաղթանակին։ Այլ կերպ ասած՝ նրա երգիծանքը դառնում է զգաստացնող ու մոբիլիզացնող կոչ, որ կազմակերպում է մասսաներին հաղթահարելու մեր առաջընթացի թերությունները ու դժվարությունները։ Դրա մեջ է Չարյանի երգիծանքի կենսահաստատ ուժը, որ այնպես առատորեն երևան է եկել նաև ուրիշ երկերում։

Ժամանակի այրող շնչով, նորի զգացումով է տոգորված նաև Չարյանի եռապատերազմյան տարիների պոեզիան, որ բնութագրվում է գաղափարական խորությամբ, թեմաների ու գեղարվեստական ձևերի բազմազանությամբ։ Այստեղ անհրաժեշտ է ընդգծել հատկապես նրա հայրենասիրական քնարի հնչեղությունը։ Բանաստեղծը բուռն խանդավառությամբ է երգում սովետական մարդկանց ստեղծարար աշխատանքը, նրանց կառուցողական եռանդն ու ոգևորությունը։ Մեր առաջընթացի թափն է արտահայտված «Գաղել կառուցման», «Երևան», «Երևանյան դաղել» և ուրիշ բանաստեղծություններում, որոնց մեջ կառուցողական թեման բացահայտված է խոր հուզականությամբ։ Այդ առավել ևս վերաբերում է ժողովուրդների բարեկամության գաղափարն արտացոլող «Մոսկվա», «Խոսք եղբայրության», «Սովետական Վրաստանին», «Ողջույն Ուզբեկստանին» և ուրիշ ստեղծագործությունների։ Դրանց մեջ ազգային տրադիցիաները ներդաշնակորեն միահյուսված են մեր երկրի բոլոր աշխատավորների ընդհանուր կենսական շահերին։ Բանաստեղծը իրավամբ հպարտանում է, որ իր պանծալի նախնիները կապված են եղել մոտիկ ու հեռավոր ժողովուրդների հետ, որոնց միջև ստեղծված կուլտուրական-քաղաքական կապերը նոր իմաստ ու բովանդակություն ստացան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ։

Ինչպես և պետք էր սպասել, Չարյանի այս շրջանի պոեզիայի մեջ առաջատար տեղ է գրավում խաղաղության մոտիվը, որը նրա մոտ արտահայտվել է ամենատարբեր ձևերով ու երանգներով։ Ըստ որում, այդ մոտիվը նրա բանաստեղծություններում սերտորեն կապված է աշխատանքի, կոմունիզմի կառուցման գաղափարի հետ։ Սովետական ժողովուրդը խաղաղասեր է, որովհետև լցված է կառուցողական պաթոսով, իսկ նա, ով կառուցում է, չի կարող ցանկանալ պատերազմ,— այս գաղափարն է Չարյանի և մեր ժողովրդի խաղաղասիրության տրամաբանական հիմքը։ Այդ երևում է նրա «Տոնօրյա

թոհեր» ոտանավորից, ուր բանաստեղծը հմայված սովետական մարդկանց ստեղծարար առօրյայով, քնարերգորեն վերապրում է հայրենի քաղաքի շինարարական խինդը, կառուցողի անդուսպ հրճվանքը, սովետական կնոջ մայրական գորովը և մեր խաղաղասեր երկիրը գեղարվեստորեն հակադրում իմպերիալիստական աշխարհին։ Մի տեղ քաղաք է բարձրանում, ծաղկում է կյանքը, իսկ մյուսում՝ օվկիանոսից այն կողմ, տարված են ջրածնային զենքի մոլուցքով։ Արդարացի ցասմամբ շիկացած բանաստեղծը պահանջում է կասեցնել «հեսանվող ոճիրը» և կոչ անում ոլորել ռումբ ձուլողների ձեռքերը, սանձահարել նոր պատերազմի հրձիգներին։ Նա համոզված է, որ խաղաղությունը կհաղթի պատերազմին և, արտահայտելով բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց այդ սրբազան ձգտումը, գրում է.

...Իմ պատշգամբից մինչև կամուրջը Բրուկլինյան
Թո՛ղ տարածվի խաղաղությունը մարդկային՝
Կապույտ, կապույտ այս երկնքի նման...[1]

* * *

Մեծ է Նաիրի Զարյանի մատուցած ծառայությունը սովետահայ գրականությանն ու հոգևոր մշակույթին։ Ավելի քան չորս տասնամյակ տևող իր գրական գործունեության ընթացքում նա ստեղծել է այնպիսի մնայուն երկեր, որոնցով իրավամբ հպարտանում է մեր ժողովուրդը։ Նրա ոգեշունչ բանաստեղծությունները ու պոեմները, «Հացավան» բարձրարվեստ վեպն ու «Արա Գեղեցիկ» հայրենաշունչ ոդիսականությունը, որոնք արտահայտում են ժողովրդական ոգու խիզախ պոռթկումներն ու լավագույն ձգտումները, խուշտ ավանդ են ձեռք ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի գանձարանում։

Դյուրին ու հարթ չի եղել Զարյանի ստեղծագործական ուղին. նա ընթացել է դժվարանց առապարներով, ունեցել է վերելքային խոշընդոտներ, վրիպումներ ու սայթաքումներ, որպիսիք հաղթահարել է անսալով շիտակ քննադատությանը, մեր պարտիայի դեկավար ցուցումներին։ Նա թերևս շատ բան կարող էր անել, որ չի արել և երբեմն արել է բաներ, որ չպետք է աներ. բոլոր դեպքերում էլ, սակայն, որպես արվեստագետ Զարյանը եղել է անկեղծ, իր ժամանակի ու միջավայրի հարազատ արտահայտիչը։

Զարյանի ստեղծագործական վաստակի լավագույն մասը ձեռք է բերել համամիութենական ճանաչում և հեղինակի անունը վաղուց դուրս է եկել ազգային շրջանակներից, պատշաճ տեղ նվաճելով սոցիալիստական ռեալիզմի գրականության բազմալեզու վարպետների շարքում։ Հատկապես ռուսերեն թարգմանության շնորհիվ նրա բազմաթիվ երկեր դարձել են եղբայրական ժողովուրդների սեփականությունը։ Ավելին, նրա ստեղծագործությունները կարդում և ուսումնասիրում են մեր Հայրենիքի սահմաններից դուրս՝ հայ և ստարազգի ընթերցողները, որոնք ուշի-ուշով հետևում են սովետական գրականությանը և ոգևորվում նրա նվաճումներով։

---

1 Միհատորյակ, էջ 190։

РОДНОЙ ГОЛОС НАШЕГО ВРЕМЕНИ

Г. А. САРКИСЯН

(Резюме)

В статье прослеживается творческий путь, пройденный Наири Зарьяном, и на основе анализа его литературной деятельности показывается, как, преодолев краткий период исканий, он в советских условиях становится одним из выдающихся мастеров армянской литературы.

Тесно связанный с жизнью, писатель в своих произведениях ярко отразил нашу советскую действительность.